ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/224

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, սննդամթերքի և կենդանիների կերի ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-4 »

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14225-2020 գրությամբ «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.09.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2904-2020 գրության հիման վրա, 22.09.2020թ.-ին «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 22.09.2020թ.-ին:

22.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/224 համարի ծածկագիրը:

01.10.2020թ.-ին և 16.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 01.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.10.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 16.09.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2904-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/9-4 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. սեպտեմբերի 14-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 15.09.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով

հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 29.09.2020թ.-ին ներկայացված պատասխան-դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ի պատասխան «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՅ-ԼՕ-2020/224 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ վերոնշյալ մասնակցի դիրքորոշման՝ հայտնում եմ հետևյալը.

հաշվի առնելով ՀՀ ՊՆ ապահովման գործընթացի խիստ կարևորությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ մասնակիցը ստորագրել է ԳՀԱՊՁԲ-20-7/9-4 պայմանագրին կից թիվ 1 համաձայնագիրը և ստանձնել պարտավորություններ և հետագայում հրաժարվել այդ պարտավորությունները կատարելուց, ինչը և նման օրինակ վերաբերմունքը ստանձնած պարտավորությունների նկատմամբ խիստ բացասական հետևանքներ է ունեցել և ունենալու ՀՀ ՊՆ ապահովման գործընթացի վրա, ուստի գտնում եմ, որ մասնակցի դիրքորոշմամբ ներկայացված անհամապատասխանությունը էական նշանակություն չի ունեցել մասնակցի կողմից համաձայնագրով նախատեսված մատակարարումից հրաժարվելու վրա և այն ընդամենը փորձ է ստանձնած պարտավորությունները չկատարելը արդարացնելու ուղղությամբ:»:

3. <u>«ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14225-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չներկայանալով հրավիրված նիստին, 25.09.2020թ.-ին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

««ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-Ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության /հետայսու նաև՝ Պատվիրատու/ կողմից կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/9 ծածկագրով ընթացակարգին /հետայսու նաև՝ Ընթացակարգ/ և 06.02.2020թ-ին "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կնքվել է ԳՀԱՊՁԲ-20-7/9-4

ծածկագրով պայմանագիրը: Հետագայում 15.04.2020թ-ին կնքվել է ԳՀԱՊՁԲ-20-7/9-4 ծածկագրով պայմանագրին կից թիվ 1 համաձայնագիրը, որով մեր կազմակերպությունը պարտավորվել է 2020թ-ի Ապրիլ ամսին մատակարարել 202 կգ սննդային հավելում՝ վիտամին /վիտամին C/:

Ստորև ներկայացնում ենք Պատվիրատուի անփույթ և անպատասխանատու գործելաոճի նկարագրությունը, որի պատճառով խախտվել է գնման ընթացակարգի ողջ տրամաբանությունն ու բնականոն ընթացքը և ինչն էլ հանդիսացել մեր կազմակերպության կողմից ապրանքի մատակարարումների ուշացման հիմնական պատճառը (Պատճառ է հանդիսացել նաև կորոնավիրուսային համավարակը, որի հետևանքով մեր կազմակերպությունը 29.06.2020թ-ից անորոշ ժամկետով դադարեցրել է իր գործունեությունը), որի արդյունքում մատակարարի կողմից լուծվել է 06.02.2020թ-ին կնքված ԳՀԱՊՁԲ-20-7/9-4 ծածկագրով պայմանագիրը.

2020թ-ի հունվարի 11-ին ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության 26 դեկտեմբեր 2019թ-ի N 1919-Ն որոշումը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ, (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138105) որով ի թիվս այլ ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվել են ֆինանսական միջոցներ նաև մեր կազմակերպության կողմից մատակարարվելիք 202 կգ սննդային հավելում՝ վիտամին /վիտամին C/-ի մասով, սակայն Պատվիրատուն խախտելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /հետայսու նաև՝ Կարգ/ 18-րդ կետը, նախ գնումների պլանում փոփոխությունը կատարել է ե gnumner.am կայքում հրապարակել է 02.03.2020թ-ի ն (չպահպանելով Կարգի 18-րդ կետով սահմանված ժամկետները), այնուհետև կրկին խախտելով Կարգի 18-րդ կետը՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին է ուղարկել 26.03.2020թ-ին (կրկին չպահպանելով Կարգի 18-րդ կետով սահմանված ժամկետները):

Իրավական հիմքերը ե հիմնավորումները.

ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետ՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո

գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետ՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործման ուղղված գործողությունների ամբողջություն է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգ, որը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը ,որ Ընթացակարգն իրականացվել է վերը նշված իրավակարգվորումների խախտմամբ, խնդրում ենք «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի “ա” ենթակետով նախատեսվող պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

01.10.2020թ.-ին ներկայացված պատասխան-դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով երկրում ստեղծված պատերազմական իրավիճակը կփորձեմ հնարավորինս զուսպ մեկնաբանել ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանման պատասխան-դիրքորոշումը.

ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանման՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի հետայսու նաև՝ Կարգ/ 18-րդ կետով սահմանված ժամկետների չպահպանման պատճառով մեր կազմակերպությունը կորցրել է շուրջ 2 ամիս ժամանակ, որը կարող էր օգտագործել մինչ կորոնավիրուսային համավարակը իր արտերկրյա գործընկերների հետ Վիտամին C ապրանքատեսակի ձեռքբերելու բանակցությունների համար,որը արդեն դարձել էր շատ դժվար իրագործելի համավարակի ամենաթեժ շրջանում (համաձայնագիրը կնքվել է

15.04.2020թ-ին, այն ինչ կարող եր կնքվել առնվազն մինչև 10.02.2020թ., եթե պահպանվեին վերոհիշյալ Կարգի 18-րդ կետով սահմանված ժամկետները):

Մեր կազմակերպությունը գիտակցելով ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանման կողմից Կարգի 18-րդ կետով սահմանված ժամկետների խախտումը, այդուհանդերձ 15.04.2020թ-ին կնքել է համաձայնագիրը ,քանի որ խոսքը գնում էր մեր բանակի զինվորների սննդի ապահովման մասին, սակայն հետագայում կորոնավիրուսային համավարակի ավելի խորացման պատճառով մեր կազմակերպությունը ստիպված 29.06.2020թ-ից անորոշ ժամկետով դադարեցրեց իր գործունեությունը, քանի որ համավարակով պայմանավորված դպրոցները ՀՀ-ում չէին գործում և մեր կազմակերպությունը զրկվել էր իր հիմնական ֆինանսական աղբյուրից («ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հիմանական գործունեությունը ՀՀ մի շարք դպրոցներին սնունդ մատակարարելն է):

ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանումը ՀՀ ՊՆ ապահովման գործընթացի խախտումների մեղքը փորձ է անում վերագրել մեր կազմակերպությանը, այն ինչ այս պարագայում ապահովման գործընթացի խախտումների N1 պատասխանատուն հենց ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանումն է, ով ինչպես երևում է իրենց պատասխան-դիրքորոշումից մակերեսային և անլուրջ վերաբերվմունք ունեն ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներին՝ մասնավորապես ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգին, ինչը և դարձել է ամբողջ գնման գործընթացի բնականոն ընթացքի խափանումների պատճառ:»:

4. <u>ՍՑ-LO-2020/224 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-4» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է գնման առարկայի անվանումը և տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ «սննդային հավելում՝ վիտամին /Վիտամին C»/ «Վիտամին C, (ասկորբինաթթու), ՖՍ 42-2668-89 1կգ-ոց ոչ թափանցիկ պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մինչև 2կգ-ոց ստվարաթղթե արկղերով: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս: Պիտանելիության ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 80%:»:

iv. Նույն հավելված 1-ով սահմանվել է նաև, որ մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում:

v. Պատվիրատուի և «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 15.04.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-4» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

vi. Համաձայնագրի թիվ 1 հավելվածի «գնման-ժամանակացույց» աղյուսակում ապրանքների մատակարարման ժամկետը եղել է ապրիլ ամիսը՝ ըստ սահմանված քանակի:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 15.09.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/4291 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊ ընկերության միջև 06.02.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/9-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և դրան կից՝ 15.04.2020թ. կնքված համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում Ընկերությունը 2020թ. ապրիլ ամսին պետք է մատակարարեր 202 կգ «սննդային հավելում՝ վիտամին /Վիտամին C», որը չի մատակարարել:

viii. Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. սեպտեմբերի 14-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը (Համաձայնագիրը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14225-2020 գրությամբ «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է **մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:

Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարություն-ի և «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-4» ծածկագրով պետական գնման Պայմանագրի 1.1 կետով սահմանվել է, որ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանք, այն է՝ սննդային հավելում՝ վիտամին /Վիտամին C»/ «Վիտամին C, (ասկորբինաթթու), ՖՍ 42-2668-89 1կգ-ոց ոչ թափանցիկ պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մինչև 2կգ-ոց ստվարաթղթե արկղերով: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս: Պիտանելիության ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 80%, ինչպես նաև Պատվիրատուի և «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 15.04.2020թ.-ին կնքված Համաձայնագրի թիվ 1 հավելվածի «գնման ժամանակացույց» սահմանվել է, որ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի ապրիլ ամսին:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 15.09.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/4291 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊ ընկերության միջև 06.02.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/9-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և դրան կից՝ 15.04.2020թ. կնքված համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում Ընկերությունը 2020թ. ապրիլ ամսին պետք է մատակարարեր 202 կգ «սննդային հավելում՝ վիտամին /Վիտամին C», որը չի մատակարարել: Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ.

սեպտեմբերի 14-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը (Համաձայնագիրը):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին Համաձայնագրի թիվ 1 հավելվածով՝ գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքի մատակարարումն եղել է անհնար՝ պայմանավորված ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ:

Բողոքներ քննող անձը վերոնշյալները քննարկելով նաև «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի համատեքստում, հարկ է համարում փաստել, որ արտակարգ դրությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է, որը սահմանվում է պետության ամբողջ տարածքում կամ առանձին հատվածներում ներքին և արտաքին վտանգներից պաշտպանվելու, ինչպես նաև երկրի սահմանադրական ու հասարակական կարգը պահպանելու նպատակով (հոդված 1): Արտակարգ դրության ռեժիմն ենթադրում է քաղաքացիների, իրավաբանական անձանց ազատությունների և իրավունքների սահմանափակում, ինչպես նաև նրանց համար լրացուցիչ պարտականությունների սահմանում (հոդված 4):

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում

ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումը իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումն ելել է օբյեկտիվ հիմքերից՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության հանգամանքով, որի արդյունքում առաջացած պատճառներն անհնարին են դարձրել Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը վերջինիս կամքից անկախ հանգամանքներով:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14225-2020 գրությամբ «ԷՅ ԸՆԴ ԷՅ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/224 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**